AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD PL 72-03-94
Ֆիզիկական անձանց վարկավորման պայմաններ /Ավտովարկ/[1]		**Խմբագրություն 70**
Ուժի մեջ է 15.09.2026թ-ից		
Առաջնային շուկայից նոր (չօգտագործված) տրանսպորտային միջոցի ձեռքբերման սպառողական վարկ[2]		
1. Նպատակ	**1.1.** Առաջնային շուկայից (ավտոսրահից[3]) նոր (չօգտագործված) տրանսպորտային միջոցի ձեռքբերման նպատակով վարկ նաև այլ բանկում/վարկային կազմակերպությունում գործող տրանսպորտային միջոցի ձեռքբերման նպատակով վարկի տեղափոխում Ամերիաբանկ ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) (վարկավորման ենթակա չեն (տաքսի) ծառայություն մատուցող վարորդները)	
2. Հաճախորդի (համավարկառուի/երաշխավորի) տարիք	**2.1.** 18-65 տարեկան, պայմանով, որ վարկային պայմանագրի ժամկետի ավարտին վարկառուի տարիքը չի գերազանցի 65 տարեկանը, գերազանցելու դեպքում վարկը տրամադրվում է համավարկառուի/երաշխավորի առկայությամբ, այս դեպքում որպես ընդունելի տարիք նույնպես ընդունվում է 18-65 տարեկանը, պայմանով, որ պայմանագրի ժամկետի ավարտին համավարկառուի/երաշխավորի տարիքը չի գերազանցի 65 տարեկանը: Ընդ որում, եթե վարկի պայմաններով սահմանված է պարտադիր համավարկառուի կամ երաշխավորության պահանջ (բացառությամբ OTI ցուցանիշի հաշվարկում ներառված եկամուտների առնվազն 70% տիրապետող անձանց համավարկառության կամ երաշխավորությունների), ապա ֆիզիկական անձ երաշխավորի կամ համավարկառուի համար որպես ընդունելի տարիք նույնպես սահմանվում է 18-65 տարեկան, պայմանով, որ պայմանագրի ժամկետի ավարտին համավարկառուի/երաշխավորի տարիքը չի գերազանցի 65 տարեկանը:	
3. Ռեզիդենտություն	**3.1.** ՀՀ քաղաքացիություն ունեցող և չունեցող ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք	
4. Արժույթ	**4.1.** ՀՀ դրամ	
5. Վարկավորման նվազագույն և առավելագույն սահմանաչափ	**5.1.** 3 մլն - 100 մլն ՀՀ դրամ	
6. Ժամկետ (ամիս)	**6.1.** 84 ամիս	
7. Տարեկան անվանական տոկոսադրույք ներառյալ գույքի ապահովագրությունը	**7.1.** Ճշգրտվող հաստատուն տոկոսադրույքով (տոկոսադրույքը կարող է փոփոխվել սկսած 37-րդ ամսվանից)	
	8.2.Հաստատուն բաղադրիչ՝ 6.9% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)	
8. Տարեկան փաստացի տոկոսադրույք ներառյալ գույքի ապահովագրությունը[2]	**8.1.** 15.95-15.98%	
9. Տոկոդադրույքի հետ կապված այլ պայմաններ	**9.1.** Հաճախորդի ցանկությամբ գույքի Ապահովագրությունը իր կողմից իրականացնելու դեպքում տոկոսադրույքը սահմանվում է - 1%:	
	9.2. Վարկի մարումների դիֆերենցված և խառը եղանակն ընտրելիս տոկոսադրույքը սահմանվում է +0.5%:	
	9.3. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված ապահովվածության (վարկ/գրավ) ցուցանիշի շեղման պարագայում տոկոսադրույքը սահմանվում է +0.25%:	
	9.4. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված վճարունակության չափանիշներից (հայտարարագրված եկամտի գծով սահմանված չափանիշների, OTI և OSM ցուցանիշներից որևէ մեկի կամ դրանց ցանկացած համադրության) շեղման պարագայում տոկոսադրույքը սահմանվում է +0.25%:	
	10.5. Այլ շեղումների դեպքում տոկոսադրույքը կարող է սահմանվել +0.25%:	
10. Վարկի տրամադրման միանվագ վճար	**10.1.** Չի սահմանվում	
11. Նվազագույն կանխավճար	**11.1.** Ձեռք բերվող տրանսպորտային միջոցի արժեքի առնվազն 5%-ի չափով:	
	12.1. Անուիտետային (վարկի գումարի և տոկոսագումարի հանրագումարը վճարվում է հավասարաչափ ամսական պարբերականությամբ)	

12. Մարման եղանակ	**12.2.** Դիֆերենցված (վարկի գումարը վճարվում է հավասարաչափ, տոկոսագումարը նվազում է՝ հաշվարկվելով մնացորդի նկատմամբ, վարկի գումարի և տոկոսագումարի մարումները կատարվում են ամսական պարբերականությամբ)
	12.3. Խառը (հաճախորդը հնարավորություն ունի ընտրել անհատական մարումների նախընտրելի ժամանակացույց, որի հիմքում ընկած կլինի հաճախորդի ֆինանսական հոսքերի դինամիկան, սակայն այնպես, որ յուրաքանչյուր տարվա ընթացքում վճարվող մայր գումարը հավասար լինի առնվազն վարկի պայմանագրային գումարի 20%-ին, տոկոսագումարը վճարվում է ամսական պարբերականությամբ)
13. Գրավադրվող գույքի նկարագրություն	**13.1.** Ձեռքբերվող տրանսպորտային միջոցը
14. Վարկ/գրավ հարաբերակցություն	**14.1.** Վարկը տրամադրվում է Ավտոսրահի կողմից հաճախորդին տրված տեղեկանքում նշված արժեքի առավելագույնը 95% չափով
15. Գրավադրվող տրանսպորտային միջոցի տվյալներ	**15.1.** Ավտոսրահից ձեռք բերվող (չհաշվառված) տրանսպորտային միջոց
16. Գրավադրվող գույքի գնահատում	**17.1.** Ավտոսրահից ձեռքբերվող տրանսպորտային միջոցի գնահատում չի իրականացվում: Որպես գրավադրման արժեք հիմք է ընդունվում Ավտոսրահի կողմից հաճախորդին տրված տեղեկանքում նշված արժեքը:
17. Լրացուցիչ ապահովում	**17.1.** Որպես լրացուցիչ ապահովում Բանկը կարող է պահանջել նաև ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորություն
18. Գրավադրվող Գույքի ապահովագրություն	**18.1.** Գրավադրվող տրանսպորտային միջոցների ապահովագրությունը իրականացվում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում. 1. Հաճախորդի կողմից՝ առնվազն վարկի մնացորդի չափով 2. Բանկի կողմից՝ վարկի մնացորդի չափով Բանկի կողմից ապահովագրության ենթակա չեն հետևյալ տրանսպորտային միջոցները. • Ավտոմեքենաներ, որոնք կրում են վտանգ սպառնացող ապրանքներ՝ տոքսիկ նյութեր, քիմիկատներ, ռադիոակտիվ և պայթյունավտանգ նյութեր • Ավտոմեքենաներ, որոնք կմասնակցեն մրցույթներին, փորձարկումներին կամ ունեն երեք անիվ, ձեռքաքրող մեքենաներ, մոտոցիկլետներ, հատուկ տեխնիկա հանդիսացող մեքենաներ
19. Պահանջվող փաստաթղթեր	**19.1. Վարկային հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր.**
	• Վարկի հայտ-դիմում
	• Անձը հաստատող փաստաթղթեր (բնօրինակը)
	• Ավտոսրահի կողմից հաճախորդին տրված տեղեկանք Ձեռքբերվող գույքի վերաբերյալ
	19.2. Նախնական հաստատումից հետո պահանջվող փաստաթղթեր.
	• Տեղեկանք աշխատավարձի վերաբերյալ և/կամ եկամուտը հավաստող այլ փաստաթղթեր
	• Ամուսնության (ամուսնալուծության, (կնոջ/ամուսնու) մահվան), ծննդյան վկայական (բնօրինակները)
	19.3. Վարկը հաստատելուց հետո պահանջվող փաստաթղթեր.
	• Տրանսպորտային միջոցի գրավի իրավունքի գրանցման վկայական
	• Տրանսպորտային միջոցի ապահովագրության պայմանագիր (Ապահովագրությունը հաճախորդի կողմից իրականացվելու դեպքում)
	• Ձեռքբերվող գույքի համար վճարված կանխավճարի՝ անկանխիկ եղանակով վճարված լինելու փաստը հավաստող պատշաճ փաստաթուղթ (օր. ՝ բնօրինակ անդորրագիր, իսկ Էլ. եղանակով վճարված լինելու պարագայում՝ Էլ. վճարումը հաստատված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ), որը Հաճախորդից չի պահանջվում, եթե վճարումը կատարվել է Բանկում գործող հաշիվ/ներ/ով և Բանկի մասնագետը ծրագրային արտահանել է տվյալ վճարման փաստաթուղթը
	•Ելնելով տարաբնույթ հանգամանքներից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն: Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» ("Know your customer") սկզբունքի հիման վրա հաճախորդից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ
20. Վարկի վաղաժամկետ մարում	**21.1.** Վարկի լրիվ կամ մասնակի վաղաժամկետ մարման դեպքում վարկի վաղաժամկետ մարման գումար չի վճարվում:

21. Տույժեր և տուգանքներ ժամկետանց մայր գումարի և տոկոսի նկատմամբ	**21.1.** Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակում է վարկային պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը: Տույժ՝ ժամկետանց վարկի և տոկոսագումարի 0.13 %-ի չափով յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար:
22. Հաճախորդի կողմից կատարվող լրացուցիչ վճարներ	**22.1.** Տրանսպորտային միջոցի ձեռքբերման և գրավադրման հետ կապված Բանկի իրավունքների պետական իրավասու մարմնում գրանցման վճար
23.Այլ պայմաններ	**23.1.** Ավտոսրահի հետ համագործակցության շրջանակներում կարող են սահմանվել այլ պայմաններ, ներառյալ՝ տարեկան տոկոսադրույք, կանխավճարի նվազագույն չափ և վարկ գրավ հարաբերակցություն, նաև կարող են չկիրառվել տոկոսադրույքի հետ կապված այլ պայմանները

Առանց վճարունակության ցուցանիշների հաշվարկի վարկի տրամադրում
(վարկը կարող է տրամադրվել առանց վճարունակության ցուցանիշների հաշվարկի, եթե Հաճախորդը համապատասխանում է Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին)

24.Վարկավորման նվազագույն և առավելագույն սահմանաչափ	24.1. 3-50 մլն ՀՀ դրամ
25.Նվազագույն կանխավճար	25.1. 3- 30 մլն ՀՀ դրամ վարկերի դեպքում 30% և ավելի 25.2. 30-50 մլն ՀՀ դրամ վարկերի դեպքում 40% և ավելի
26.Վարկ/գրավ հարաբերակցություն	26.1. 3-30 մլն ՀՀ դրամ վարկերի դեպքում՝ Ավտոսրահի կողմից հաճախորդին տրված տեղեկանքում նշված արժեքի առավելագույնը 70% չափով 26.2. 30-50 մլն ՀՀ դրամ վարկերի դեպքում՝ Ավտոսրահի կողմից հաճախորդին տրված տեղեկանքում նշված արժեքի առավելագույնը 60% չափով
27.Այլ պայմաններ	27.1. Մնացած պայմանները՝ համաձայն սույն փաստաթղթով սահմանված վճարունակության ցուցանիշների հաշվարկով տրամադրվող վարկավորման պայմանների

[1]Սույն պայմանները նախկինում ունեցել են հետևյալ անվանումն ու կոդը՝ "Ֆիզիկական անձանց վարկավորման պայմաններ" (11RBD PL 72-03-01): Բանկի մի շարք փաստաթղթեր կարող են պարունակել հղում սույն պայմաններին՝ նշված նախկին անվանմամբ և կոդով:

[2]Սույն պայմանները Ֆիզիկական անձանց սպասարկման ընդհանուր պայմանների իմաստով Ծառայության պայմաններ են: Ֆիզիկական անձանց սպասարկման ընդհանուր պայմանները տարածվում են սույն պայմաններով կարգավորվող իրավահարաբերությունների նկատմամբ այնքանով, որքանով սույն պայմաններով այլ բան սահմանված չէ:

Ֆիզիկական անձանց սպասարկման ընդհանուր պայմաններ (11RBD RL 72-01-01), ընդունվել է Բանկի Տնօրինության 04.02.2015թ. թիվ 02/03/15 որոշմամբ: Հղումը՝ https://ameriabank.am/useful-links

[3]Բանկի և Ավտոսրահի միջև համագործակցության պայմանագրի առկայությունը պարտադիր է:

[4]Փաստացի տոկոսադրույքի մեծությունը/արժեքը կարող է վերը նշվածից տարբերվել, եթե առկա են հետևյալ գործոնները կամ դրանցից որևէ մեկը.
-Հաճախորդի ցանկությամբ գույքի ապահովագրությունը Բանկի կողմից իրականացվելու դեպքում
-Վարկի մարումների դիֆերենցված կամ խառը եղանակն ընտրելու դեպքում
-Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված վճարունակության չափանիշներից շեղման դեպքում
-Լրացուցիչ գույք գրավադրելու դեպքում
-Այլ շեղումների դեպքում